

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության հայցապահանջագրերի և գանձումների սպասարկման բաժնի առաջատար մասնագետ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՎԵԼ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Բարոյական վնասի հատուցման հարցում մեր երկիրը բավականին համեստ պատճառներով ունի՝ ի տարբերություն անգլոսաքսոնական (նախադեպային) իրավական համակարգի երկրների (Անգլիա, Ամերիկա), որտեղ նշված ինստիտուտի տեսությունը և սրբազանիկան մեծ ազդեցություն են բողեղ իրավական համակարգում:

Պետք է նշել, որ բարոյական վնասի հատուցման ինստիտուտը խոր արմատներ ունի և գալիս է դեռևս հռոմեական իրավունքից: Նրանում, մասնավորապես, տուժողին միայն գույքային վնասի հատուցման իրավունք էր վերապահվում և ոչ գույքային վնասի պարգևատրման հնարավորություն էր բույլ ստալիս միայն առանձնակի, բացառիկ դեպքերում, օրինակ՝ վիրավորանքի հայցերը *բենեֆիս (actio injuriarum)*:

Հարկ է նշել, որ բարոյական վնասի հատուցումը առանցքային սեղ է գրադեցնում այն երկրներում, որտեղ նշված ինստիտուտը գործում է և այն հանդիսանում է, քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկը:

90-ական թվականների սկզբից ռուսական օրենսդրությունը համարվեց սկզբունքորեն նոր իրավական ինստիտուտով՝ պատճառված բարոյական վնասի հատուցմամբ: Պետք է նշել, որ «բարոյական վնաս» եզրույթը իրավաբանական բարոյագրչություն օգտագործվում էր ավելի վաղ, սակայն նրա բնութագիրը կախատրեւ տարբերվում էր նկրկայիս բնութագրից:

1953թ. «Իրավաբանական բառարանում» ստվում էր. «Ոչ գույքային կամ այսպես կոչված բարոյական վնասի՝ դրամական հատուցումը սովետական մարդու արժանապատվությունը նվաստացնում է և համաձայն գործող օրենսդրության՝ տեղ չի կարող ունենալ»:

Եվ այդ բառարանի հրատարակումից երեսուն տարի անց էլ իրավաբանական գրականությունում հաստատվել էր նշված դիրքորոշումը: Հայտնի իրավաբաններ՝ Վ. Մմիրնովի և Ա. Սորչակը անժխտելիորեն պնդում էին, որ բարոյական վնասը գուրկ է տնտեսական բովանդակությունից և նյութական հատուցման ենթակա չէ: Մեկ այլ իրավաբան՝ Մ. Մարկովը, գրում էր. «Բարոյական վնասը, որը հանցագործությունից կրում է սուժոյր և նրա հարազատները, նյութական հատուցման ենթակա չէ»:

Այսպիսով, բախանին երկար ժամանակ համարվում էր, որ սոցիալիստական հասարակությունում բարոյական վնասը ընդհանրապես հատուցման ենթակա չէ: Դրա հիմնավորման կիմրում դրվում էր այն փաստարկը, որ խորհրդային մարդու անհատականությունը գտնվում էր այնքան անհասանելի բարձունքի վրա, որ նրան ոչ մի կեղյակ չի կարելի դրամական գնահատական տալ:

Չնայած նշված ինստիտուտը համեմատաբար նոր է հայտնվել օրենսդրության մեջ, սակայն այն մեծ ժողովրդականություն ունի և հասարակական մեծ պահանջարկ է վայելում: Այն միաժողովել է իրավական համակարգին, համասուպն որի՝ մարդու իրավունքներն ու

ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ: Յուրաքանչյուրն իրավունք ունի պաշտպանելու իր իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված ցանկացած ձևով: Քաղաքացիական իրավունքների պաշտպանության նշված ձևերից մեկն էլ հանդիսանում է բարոյական վնասի հատուցումը:

Պաշտպանության այս միջոցը իրավախախտի վրա պարտականություն է դնում օտոժողին դրամական հատուցում տալու բարոյակրոն և ֆիզիկական տառապանքի համար, որը վերջինս վերստայրում է՝ կապված իր իրավունքի խախտման հետ:

Բարոյական վնասի հատուցման ինստիտուտը նպաստում է մարդու ոչ նյութական բարիքների և անձնական ոչ գույքային իրավունքների առավել ամբողջական պաշտպանությանը, ինչը անառարկելիորեն ծառայում է հասարակությունում ժողովրդավարական իրավակարգի հաստատմանը և ամրապնդմանը:

Չնայած բարոյական վնասի հատուցման թեման արդիական է, և բազմաթիվ աշխատանքներ կան այս թեմայով՝ այնուամենայնիվ, կան շատ սկզբունքային հարցեր, որոնց վերաբերյալ չկա միասնական մոտեցում ոչ օրենսդրությունում, ոչ տեսարանների մոտ: Այդպիսի հարցերի թվին են դասվում՝

1. բարոյական վնասի հատուցումը գույքային իրավունքների խախտման պարագայում,
2. հատուցման չափի որոշումը,
3. իրավաբանական անձին կամ երրորդ անձանց բարոյական վնասի հատուցման չափի որոշելիս առանձին չափորոշիչների հաշվառումը և այլն:

ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 151 հոդվածի համաձայն, «Եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս (ֆիզիկական և բարոյական տառապանքներ) գործողություններով, որոնք խախտում են նրա անձնական ոչ գույքային իրավունքները կամ ռոնձրգում են քաղաքացուն պատկանող այլ ոչ նյութական բարիքների դեմ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում դատարանը

կարող է իրավախախտի վրա նշված վնասի դրամական հատուցման պարտականություն դնել:

Կամ այնպիսի երկրում, ինչպիսին Էստոնիան է, դեռևս 1968թ-ից գործում է վնասի հատուցման վերաբերյալ առանձին օրդոնանս: Այդ օրդոնանսի համաձայն՝ վնասի (նեգեկ) տակ հասկացվում է կյանքից զրկվելը, ունեցվածքի, հանգստության և հարմարավետության, առողջության կամ բարի անվան ամբողջական կամ մասնակի կորուստը, ինչպես նաև դրանց հետ կապված այլ բարիքների լրիվ կամ մասնակի կորուստը:

Պետք է նշել, որ ներկայիս ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բարոյական վնասի հատուցում չի նախատեսում, դա այն պարագայում, երբ նախկին քաղաքացիական օրենսգիրքը պարունակում էր առանձին 7 հոդվածը, որը նվիրված էր բարոյական վնասի հատուցմանը և ամբողջությամբ վերաբրտադրում էր ՌԴ քաղաքացիական օրենսգրքում սահմանված բարոյական վնասի հասկացությունը: Չնայած այս ամենին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում տեղ են գտել առանձին հոդվածներ, որոնք պարունակում են բարոյական վնասի հատուցման տարրեր: Մասնավորապես ՀՀ քաղ. օր. 17 հոդվածի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում (ենթադրվում է նաև բարոյական), եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Կամ 19 հոդվածի համաձայն՝ քաղաքացին, ում մասին տարածվել են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունները հերքելու հետ միասին պահանջել հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասները: Նույնը վերաբերում է նաև 18-րդ հոդվածին, որը նվիրված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պատճառած վնասների հատուցմանը:

Ուշադրության է արժանի այն հանգա-

մանր, որ և ՌԳ քաղաքացիական օրենսգիրքը, և՛ ՀՀ քաղ. օր.-ը (որոշ հոդվածներ) վնասի հատուցմանը նվիրված հոդվածներում հատկապես շեշտադրում են «քաղաքացի» արտահայտությունը՝ դրանով իսկ պրկելով օտարերկրացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց վնասի (այդ թվում՝ բարոյական) հատուցման պահանջով դատարան դիմելու իրավունքից: Կա այդքան էլ ճիշտ չէ հատկապես ՀՀ-ի համար, քանի որ ՀՀ-ում օտարերկրացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք օգտվում են քաղաքացիների համար նախատեսված բոլոր իրավունքներից, բացառությամբ օրենքով նախատեսվածների (հողի նկատմամբ սեփականության իրավունք, ընտրական իրավունք և այլն):

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է տեսականորեն առաջարկել քաղաքացիական իրավունքի 17 հոդվածը շարադրել հետևյալ կերպ.

«Անձը, որի իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների (այդ թվում՝ բարոյական) լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ առկա չեն օրենքով նախատեսված այնպիսի հանգամանքներ, որոնք նվազեցնում կամ կարող են նվազեցնել հատուցման ենթակա գումարի չափը»:

Բարոյական վնասի հատուցման ինստիտուտի ժամանակակից իրավիճակը հանդիսանում է մշտական քննարկումների առարկա, որի ծանրության կենտրոնը հիմնականում բեռված է 2 խնդրի վրա.

1. հոգեբանական վնասի նվազումն առ փոփոխությունների տարբերությունը, որը կապված չէ մարմնական վնասվածքների պատճառելու հետ,

2. իրավախախտի պատասխանատվության սահմանափակումը նյարդային ցնցումի պատճառման դեպքում, երբ հոգեբանական վնասը պատճառվել է անզգուշությամբ:

Բարոյական (հոգեբանական) վնասի հատուցման պահանջների վերաբերյալ մոտեցումների փոփոխման միտումները հիմք են

հանդիսացել մշակելու նշված խնդրի վերաբերյալ միասնական կանոններ, որոնք արտահայտվում են հետևյալում.

1. մարմնական վնասվածքների հետ չկապված հոգեբանական վնասի պատճառումը պետք է հիմք հանդիսանա տուժողի մոտ գրամական հատուցում պահանջելու իրավունքի առաջացման համար.

2. պետք է պահպանվի իրավախախտի կողմից իրադրության ակնատեսին (տուժողին) բարոյական տառապանքներ պատճառելու հնարավորության խելամիտ կանխատեսման պահանջների նկատմամբ հատուկ սահմանափակումների կիրառումը.

3. այն անձանց շրջանակի հատակ որոշումը, որոնց պետք է ճանաչել մերձավոր և փոխկապակցված անձինք (այդ շրջանակը, բացի անուսիններից, պետք է ներառի ծնողներին և երեխաներին, եղբայրներին և քույրերին (Անգլիայում այն ներառում է նաև փաստական անունական հարաբերությունների մեջ գտնվող անձանց)),

4. այն դեպքերում, երբ հայցվորի և առաջնային տուժողի միջև առկա են կապվածության և սիրո զգացումներ, տուժողի անմիջական տարածական և ժամանակային մոտիկության պայմանները դեպքի վայրին, ինչպես նաև իրադրության ընկալումը անմիջականորեն հայցվորի զգայական օրգանների կողմից, չի կարող պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման հանդիսանալ.

5. տուժողի մոտ, որը իր կամքին հակառակ հանդիսացել է վնասակար իրադարձության մասնակից, հոգեկան հիվանդության առաջացման դեպքում անհրաժեշտություն չկա ապացուցելու, որ վնաս պատճառողը հնարավորություն ուներ կանխատեսելու հատկապես մասն հետևանքների վրա հասնելը.

6. հոգեկան հիվանդության առաջացման դեպքում հատուցումը պետք է թույլատրվի՝ անկախ հիվանդության ծանրության աստիճանից.

7. եթե իրավախախտման արդյունքում տուժողի գույրին պատճառվում է վնաս, ապա

վնաս պատճառովի պատասխանատվության հիմքերը ականատեսի առջև այդպիսի իրավախախտման համար չպետք է ավելի կոշտ լինեն, քան տուժողի առողջությանը վնաս պատճառելու դեպքում ականատեսի ներկայության դեպքում:

8. հոգերանական վնասի պատճառման համար պատասխանատվությունը պետք է ստարածվի այն դեպքերի վրա, երբ աշխատողի հագեկան հիվանդությունը գործատուի կողմից աշխատողի վրա ունեցվող շահագրգռությամբ դրված չափազանց ծանրաբեռնվածության կանխատեսելի արդյունք է: Գործատուն պարտավոր է միշտ անհրաժեշտ հոգատարություն դրսևորել իր աշխատողի նկատմամբ՝ ապահովելու աշխատանքի անվտանգ և առողջ պայմաններ:

Քանի որ բարոյականությունը դասվում է անձնական ոչ գույքային բարիքների շարքին, ապա նրան բնորոշ են նշված բարիքներին բնորոշ հատկանիշները, բնութագրում են սուբյեկտի անհատականությունը և հավաստում արժանիքները, զուրկ են անտեսական բովանդակությունից (այսինքն՝ նշված հարաբերություններում համարվելություն չի կիրառվում), անօտարելի ու անփոխանցելի են:

Բարոյական վնասին հատուկ են վնաս պատճառելուց բխող պատասխանատվության ընդհանուր կանոնները, ասկայն բնօրինակ կանոնների մեջ վերջինիս ներհատուկ են նաև պատասխանատվության ենթարկելու հատուկ պայմաններ: Դրանք են

1. տատաղյակների առկայությունը, այսինքն՝ բարոյական վնասի՝ որպես անձնական ոչ գույքային իրավունքների խախտման կամ այլ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգության հետևանք:

2. վնաս պատճառողի ոչ իրավաչափ գործողությունը:

3. ոչ իրավաչափ գործողության (անգործության) և բարոյական վնասի միջև առկա պատճառական կապը:

4. վնաս պատճառողի մեղքը:

Առաջին պայմանը հանդիսանում է «բարոյական վնասի» առկայությունը, այ

սինքն՝ տուժողի հոգեկան ոլորտում առկա ունեցող բացասական փոփոխությունները, որն արտահայտվում է վերջինիս կողմից ֆիզիկական և բարոյական տառապանքներ կրելու մեջ:

Բարոյական վնասի կարևոր առանձնահատկությունը հանդիսանում է այն, որ բացասական փոփոխությունները, որոնք տեղի են ունենում տուժողի գիտակցությունում և դրանց արտաքին դրսևորման ձևը կախվածության մեջ են գտնվում սուբյեկտի հագեբանությունից:

Պետք է նշել, որ ՌԳ դատական պրակտիկայում լայնորեն կիրառվում է փորձագետի եզրակացությունը, որի հանդիսանում է բարոյական վնասի պատճառման անողղակի ապացույց:

Բարոյական վնասը հասուցվում է դրամական կամ այլ նյութական ձևով և դատարանի կողմից որոշված չափով՝ անկախ հասուցման ենթակա գույքային վնասի չափից:

ՌԳ 1995թ. բաղարացյալական օրենսգիրքը տարբերակված մոտեցում է ցուցաբերում բարոյական վնասի պատճառման դեպքերի համար: Եթե բարոյական վնասը անձին պատճառվել է նրան պատկանող ոչ նյութական բարիքի վրա ոտնձգություն կատարելու միջոցով, ապա այն, օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում, ենթակա է հատուցման՝ անկախ նրանից՝ առանձին օրենքով նախատեսված է այդպիսի հատուցում, քն՝ ոչ: Նշված դեպքերում վնասի հատուցման բավարար հիմք է համարվում քաղաքացիական օրենսգրքի 151 հոդվածը: Իսկ եթե բարոյական վնասը պատճառվել է որևէ նյութական բարիքի նկատմամբ ոտնձգելու ճանապարհով, ապա վնասը ենթակա է հատուցման, եթե առկա է այդպիսի հատուցում նախատեսող հատուկ օրենք:

Ի տարբերություն գույքային վնասի, որը կարող է հատուկ որոշվել և հատուցվել (տուժողին իրավախախտման արդյունքում կորցված գույքի փոխարեն տրվում է դրա համարվելը դրամական կամ բնամթերային ձևով): Ինչը թույլ է տալիս առանց վնասների վերականգնել տուժողի գույքային ոլորտը, գնահա-

տեղ ֆիզիկական և բարոյական տառապանքները և փոխհատուցել դրանք հնարավոր չէ: Հնարավոր է միայն որոշակի հատուցում պատճառված բարոյական վնասի համար, որը կոչված (նպատակատիրված) է, դրական լիցքեր հատորդելու և որոշ չափով հարբելու պատճառված վնասները:

«Բարոյական վնաս» հասկացողության տարածական սահմանում է տվել ՌԳ Գերագույն դատարանը իր 1994թ. դեկտեմբերի 20-ի «Բարոյական վնասի հատուցման վերաբերյալ օրենսդրության կիրառման որոշակի հարցեր» թիվ 10 որոշմամբ: Գրա համաձայն՝ բարոյական վնաս ասելով՝ հասկացվում է բարոյական կամ ֆիզիկական տառապանքներ, որոնք պատճառվել են գործողությամբ (անգործությամբ), որոնք ուսնձգում են բաղարացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների (կյանք, առողջություն, արժանապատվություն, գործարար համբավ, անձնական կյանքի անձեռնմխելիություն, անձնական և քննատենական զաղտնիք և այլն), կամ խախտում են նրա անձնական ոչ գույքային իրավունքները (անվան օգտագործման իրավունք, եկոլինակային իրավունք և այլ ոչ գույքային իրավունքներ՝ կապված մտավոր գործունեության արդյունքների պաշտպանության հետ), կամ խախտում են բաղարացու գույքային իրավունքները:

Այսպես՝ Ա.Մ. Էրդյեսկին նշում է, «Բարոյական վնասի բովանդակության սահմանումը որպես «տառապանք» նշանակում է, որ վնաս պատճառողի գործողությունները անպայման պետք է իրենց արտացոլուք գտնեն տուժողի գիտակցությունում, առաջ բերեն ողորակի հոգեբանական ծեղկցիա: Ընդ որում օրենքով պահպանվող բարիքների ոչ ցանկալի փոփոխությունները մարդու գիտակցությունում արտացոլվում են և բացասական զգացողությունների (ֆիզիկական տառապանքներ) և բացասական պատկերացումների կամ անհանգստության (բարոյական տառապանքներ) ձևով:

Ինվալիդանին ակնհայտ է, որ ցանկա-

ցած ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն կարող է տուժողի մոտ առաջ բերել տարբեր աստիճանի բարոյական տառապանքներ և նրան ամբողջությամբ կամ մասամբ զրկել հուզական բարօրությունից:

Չնայած այն հանգամանքին, որ մարդը տառապանքներ է ունենում տարբեր դեպքերում՝ նշված ոչ բոլոր դեպքերն են մարդու բացասական վնասի հատուցման իրավունք վերապահում:

Կարևոր է ընդգծել, որ «տառապանք» հասկացողությունը իր բովանդակությամբ չի համընկնում «ֆիզիկական վնաս» կամ «առողջությանը վնաս» հասկացողությունների հետ:

Ֆիզիկական տառապանքի բարոյական վնասի ձևերից մեկն է, որի սահմանումը տրված է ՌԳ օրենսդրությամբ: Ֆիզիկական (օրգանական) վնասը այն է, որ պատճառվում է մարդու առողջությանը՝ կապված մարդու օրգանիզմում օրգանական գործընթացների կատարման հետ, որոնք հանգեցնում են ֆիզիկական առողջության վատարացման:

Ժամանակակից տեսությունում վիճահարույց է հանդիսանում «բարոյական վնաս» հասկացողությունում այնպիսի տարրի ներառման հարցը, ինչպիսին է «հոգեբանական բարօրությունը»:

Հետազոտողների մի մասը «հոգեբանական բարօրությունը» ներառում է «բարոյական վնաս» հասկացողության մեջ՝ դրանով իսկ այն համարելով բարոյական վնասի բաղադրիչ: Իսկ մյուս հետազոտողները «հոգեբանական բարօրությունը» չեն ներառում «բարոյական վնաս» հասկացողության մեջ՝ այն համարելով բարիքի ինքնություն տեսակ: Այսպես, եթե հոգեբանական բարօրությունը դասենք պաշտպանության ենթակա ոչ նյութական բարիքների շարքին, ապա նրա՝ բարոյական վնասի հատուցման ճանապարհով պաշտպանության համար սահմանափակումներ հնարավոր չի լինի հստակ սահմանել: Հետևաբար, գույքային իրավունքների ցանկացած բնույթի խախտման դեպքում բույլատրելի կլինի բարոյական վնասի հատուցումը:

Սակայն, ինչպես արդեն նշվել է, գույքային իրավունքների խախտման դեպքում դրանց պաշտպանությունը իրավախախտմանը պատճառված տառապանքների հատուցման միջոցով պետք է հստակ նախատեսված լինի օրենքով:

Ոստի անձի հոգեբանական րարօբությունը անկրածկոտ և համարել յուրահատուկ, ոչ նյութական բարիք, և, համապատասխանաբար, բարոյական վնասը դասել վնասի հատուկ տեսակների շարքին, որը կարող է գույքատեղ ոչ թե ինքնուրույն, այլ որպես գույքային կամ ոչ գույքային վնասի պատճառման հետևանք:

Երկրորդ պայմանը հանդիսանում է վնաս պատճառողի գործողությունների հակաիրավականությունը: Սրա էությունը կայանում է օրյեկտիվ իրավունքի նորմերի գործողությունների հակասության մեջ: Շատ տեսաբաններ առաջարկում են այս պայմանի համար սահմանել «Բարոյական վնասի կանխավարկածի» սկզբունքը, համաձայն որի, «Ցանկացած ֆիզիկական անձ, որի հանդեպ կատարվել է անիրավաչափ գործողություն, ճանաչվում է բարոյական վնաս կրած, եթե վնաս պատճառողը չապացուցի հակառակը»: Դա նկատելիորեն դյուրին կդարձնի տուժողի դիրքորոշումը և կնվազեցնի պրակտիկայում առկա այն դեպքերը, երբ իրավախախտը խուսափում է բարոյական վնասի պատճառման համար պատասխանատվությունից միայն այն պատճառով, որ տուժողը, անբավարար կրթրվածության կամ օրենքի չիճացության պատճառով ի վիճակի չի լինում կատարվածը որակել որպես իրավախախտում և ներկայացնել համապատասխան հայց:

Երրորդ պայմանը հանդիսանում է հակաիրավական գործողության և բարոյական վնասի միջև առկա պատճառական կապը: Հակաիրավական գործողությունը պետք է լինի անհրաժեշտ պայման ֆիզիկական կամ բարոյական տառապանքների տեսքով րացասական հետևանքների առաջացման համար:

Եվ վերջապես, վերջին պայմանը հան-

դիսանում է վնաս պատճառողի մեղքի առկայությունը: Մեղքը վնաս պատճառողի հոգեբանական վերաբերմունքն է իր հակաիրավական գործողությունների և դրա հետևանքների նկատմամբ, որն արտահայտվում է դիտավորության կամ անզգուշության ձևով:

Այստեղ կա երկու յուրահատկություն.

1. մեղքի ձևը ճիշտ որոշելը ունի ոչ միայն կարևոր տեսական, այլ նաև գործնական նշանակություն. բանի որ ուղղակիորեն ազդում է բարոյական վնասի հատուցման չափի վրա: Այսպես, կարելի է սահմանել հատուցման հետևյալ չափերը՝ ըստ մեղքի ձևերի, ուղղակի դիտավորության դեպքում՝ 100%, անուղղակի դիտավորության դեպքում՝ 75%, կոպիտ անզգուշության դեպքում՝ 50%, թեթև անզգուշության դեպքում՝ 25%, իսկ մեղքի բացակայության դեպքում՝ 10%: Միևնույն ժամանակ, եթե անձը, որը կրել է գույքային վնաս, մեղավոր չի եղել ոչ վնասի առաջացման և ոչ էլ դրա չափերի մեծացման վրա, վնաս պատճառողի մեղքը նշանակություն չունի հատուցման ենթակա կոյուսանների չափը որոշելիս: Սակայն բարոյական վնասը հատուցելիս, վնաս պատճառողի մեղքի աստիճանը հաշվի է առնվում համանման հանգամանքներում,

2. սահմանված են որոշ դեպքեր, երբ ընդհանուր կանոնից բացառություն է արվում, այսինքն՝ բարոյական վնասի հատուցումը իրականացվում է անկախ վնաս պատճառողի մեղքի առկայությունից: Այդ դեպքերն են.

ա) քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնասը պատճառվել է ուտվել վտանգի աղբյուրով,

բ) քաղաքացուն վնասը պատճառվել է անօրինական դատապարտման, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ ստորագրություն չհեռանալու մասին կիրառելու, նրա նկատմամբ վարչական կալանք կամ ուղղիչ աշխատանքներ կիրառելու արդյունքում,

գ) անձի պատիվը, արժանապատվությունը և գործուրար համբավն (անունը) սպառնալիցորոշ տեղեկությունների տարածման դեպքում.

դ) օրևնրով նախատեսված այլ դեպքերում:

Քարոյական վնասի հատուցման ժամանակ հաջորդ կարևոր առանցքային չափը՝ բարոյական վնասի հատուցման չափը (մեթոդաբանությունը) որոշելն է: Այս հարցում մոտեցումները շատ տարբեր են և բազմազան. սակայն կարելի է որոշել այն չափորոշիչները և պայմանները, որոնք առավելագույնս կհամապատասխանեն պատճառված բարոյական վնասի վերականգնման և արդարության պահանջներին:

Այսպես, բարոյական վնասի հատուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները՝

1. իրավախախտի մեղքի աստիճանը.
2. վնաս կրած անձի՝ անհատական առանձնահատկություններով պայմանավորված ֆիզիկական և բարոյական տառապանքների աստիճանը.
3. ֆիզիկական և բարոյական տառապանքների բնույթը, որը պետք է հաշվի առնվի վնաս պատճառելու փաստական հանգամանքներով.
4. ինքնամտության և արդարության պահանջները.
5. տուժողի մեղքի աստիճանը.
6. վնաս պատճառողի գույքային դրությունը.
7. ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

«Տառապանքների աստիճանի» տակ պետք է հասկանալ տառապանքների խորությունը (ծանրությունը): Սրա հետ կապված էլ օգտագործվում է «թեթև ցավ», «տանելի ցավ», «ուժեղ ցավ», «անտանելի ցավ», որը բնութագրում է տառապանքների խորությունը: Ընդ որում, մարդու տառապանքների խորությունը հիմնականում կախված է այն ոչ նյութական բարիքների բնույթից, որոնց վնաս է պատճառվել և դրանց նվազման չափից, իսկ տուժողի անհատական առանձնահատկությունները կարող են ավելացնել կամ նվազեցնել տառապանքների այդ խորությունը: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել այսպես ասած «միջին» տառապանքների աստիճանը և, տուժողի անհատական առանձնահատկությունների հետ կապված, դրանից շեղումը, որը թույլ կտա դա-

տարանին որոշելու բարոյական վնասի իրական չափը և որոշելու դրան համապատասխան հատուցման ենթակա գումարի ճշգրիտ չափը:

Այսպիսով, բոլոր դեպքերով էլ հատուցման չափի անհրաժեշտ չափորոշիչ կհանդիսանա տառապանքների միջին խորությունը, կամ Լեոթադրյալ բարոյական վնասը՝ կոնկրետ իրավախախտման պարագայում:

Ենթադրյալ բարոյական վնասը այն տառապանքներն են, որոնք, ընդհանուր պատկերացման համաձայն, պետք է ունենա «միջին», «նորմալ» արձագանքող մարդը իր նկատմամբ կատարված ոտնձգությանը:

Կարևոր է նաև անդրադառնալ խելամտության և արդարության պահանջներին: Առաջին հայացքից անտվոր և նույնիսկ տարօրինակ է թվում քաղաքացիական իրավունքի առանձին այնպիսի իմաստիտուտի համար, ինչպիսին բարոյական վնասի հատուցումն է, նման սկզբունքների սահմանումը, քանի որ կարելի է ենթադրել, որ նշված պահանջները պետք է վերաբերեն դատարանում քննվող ցանկացած գործի: Սակայն այս պարագայում նշված սկզբունքները հատկապես կարևոր նշանակություն ունեն, քանի որ բարոյական վնասի հատուցման դեպքում չկան տուժողի կրած տառապանքների խորության չափման հստակ գործիքներ կամ այդ տառապանքները դրսևական արտահայտության վերածելու որոշակի մեխանիզմներ, ուստի օրենսդիրը սրանով ցանկացել է սահմանել որոշակի «ճկուն» կառուցակարգ, որը դատարանին թույլ կտա, կյնելով գործի առանձնահատկություններից և հանգամանքներից, իրավախախտից հոգուտ տուժողի գանձելու որոշակի գումար և դրանով որոշակիորեն հարթելու այն բացասական հետևանքները, որը տուժողը կրել է իրավախախտման արդյունքում:

Միևնույն ժամանակ, այս սկզբունքների տակ պետք է հասկանալ նաև այն, որ հստակ տարանջատում պետք է անցկացվի ոչ նյութական բարիքների հարցում, որպեսզի չստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ, ասենք, հեղինակա-

յին իրավունքների խախտման համար սուժողը ավելի շատ կամ նույնչափ հատուցում ստանա, որքան առողջությանը պատճառված վնասի դեպքում, որը հանգեցրել է տեսողության կամ խողովրդի կորստի:

Այս սկզբունքի տրամաբանությունից ելնելով էլ օրենսդրական կարգով պետք է մշակվի և ընդունվի գործակիցների հատակ համակարգ, որը կիրառելի կլինի իրավախախտման կոնկրետ դեպքում և որը թույլ կտա դատարանին որոշակիորեն և հնարավորինս ճշգրիտ որոշելու յուրաքանչյուր գործով հատուցման ենթակա գումարի չափը: Եվ որպես հաշվարկման հիմք պետք է ընդունվի բազիսային միավորը, որի օրինակ կարող է ծառայել, ասենք, առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում որոշված հատուցման չափը:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է մշակել մի բանաձև, որը դյուրին կդարձնի բարոյական վնասի հաշվարկման խնդիրը և թույլ կտա խուսափելու սուրյեկտիվիզմի դրսևորումներից: Նշված բանաձևը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$D = d \times f_v \times i \times c \times (1 - fs),$$

D - իրական բարոյական վնասի հատուցման չափն է,

d - ենթադրյալ բարոյական վնասի հատուցման չափն է,

f_v - իրավախախտի մեղքի աստիճանն է, ընդ որում $0 < f_v < 1$,

i - տուժողի անհատական առանձնահատկությունների գործակիցն է, ընդ որում $0 < i < 2$,

c - ուշադրության արժանի փաստական հանգամանքների գործակիցն է, ընդ որում $0 < c < 2$,

fs - տուժողի մեղքի աստիճանը, ընդ որում $0 < fs < 1$:

Այս բանաձևում ներառված չէ իրավախախտի գույքային դրույթան գործունք, որը ներառելու դեպքում հատուցման ենթակա գումարը կնվազի: Նշված հանգամանքը չի կարելի կիրառել ողորակի դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերի վրա, ասկայն չի կարելի մտնել այն իսպառ թույլատրել, աստի ուղե դեպ-

քերի համար, որտեղ պետք է հաշվի առնել նաև իրավախախտի գույքային դրույթունը, առաջարկվում է հետևյալ բանաձևը.

$$D = d \times f_v \times i \times c \times (1 - fs \times p),$$

որտեղ p-ն իրավախախտի գույքային դրույթունն է:

Պետք է ի նկատի ունենալ, որ բարոյական վնասի հատուցման կանոնները հանդիսանում են ոչ թե ընդհանուր, այլ՝ հատուկ:

Բարոյական վնասը կարող է արդյունք լինել ինչպես գործողության, այնպես էլ անգործության, այսինքն ոչ միայն ակտիվ, այլ նաև պասիվ վարքագծի:

Կարևոր է անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344 հոդվածով սահմանված դրույթների: Մասնավորապես այդ հոդվածով սահմանված են այն պահանջները, որոնց վրա հայցային վաղեմություն չի տարածվում: Կարծում ենք ՀՀ օրենսդրությամբ բարոյական վնասի հատուցման ինստիտուտը նախատեսված լինելու դեպքում բարոյական վնասը պետք է ներառվեր հիշյալ հոդվածում:

Քանի որ բարոյական վնասը դաժվար է անձի հետ անիվելիորեն կապված իրավունքների շարքին, ապա նշված պահանջի իրավահաջորդություն կամ անցնելն այլ անձի չի թույլատրվում: Այսինքն նույն պատճառաբանությամբ էլ չպետք է, թույլատրվի բարոյական վնասի հատուցման հետ կապված պահանջների հաշվանցը: Բացի այդ, կյանքին և առողջությանը պատճառված և բարոյական վնասի հատուցման ու ախմենտի վճարման պարտավորությունների նկատմամբ նորացում չի թույլատրվում: Այս հանգամանքներից ելնելով է, որ բարոյական վնասի պատճառման համար պատասխանատվությունը մեծամասամբ առաջանում է կողմնի միջև քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների յուզակարգի պարագայում: Չնայած որան հնարավոր են դեպքեր, երբ պայմանագրային հարաբերությունների առկայության պարագայում էլ առաջանում է բարոյական վնասի հատուցման իրավունք, օրինակ երբ հեղինակային տարաբանագրի գործողության ակտիվությունը ամբողջապես կորսվել է:

կելիս հրատարակիչը խալստում և հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները (անվան իրավունքը կամ ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը):

Կարևոր նշանակություն ունի նաև այնպիսի հարցի օրենսդրական ամրագրումը, ինչպիսին է իրադրության ականատեսին բարոյական վնասի հատուցման իրավունքի վերապահումը, որը կարևոր գործնական նշանակություն ունի: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, արդարացի կլինի որպեսզի որոշակի դեպքերում բարոյական վնասի հատուցման իրավունք վերապահվի իրականությանը համապատասխանող այնպիսի տեղեկությունների տարածման համար, որոնք օրենսդրորեն թույլատրված չէ հրապարակել (օրինակ՝ որդեգրման կամ առևտրային գաղտնիքը և այլն):

Բացի այդ, շատ կարևոր է նաև այնպիսի հարցի հստակ որոշումը, թե դրամական հատուցումը հանդիսանալ՞ու է բարոյական վնասի

սի հատուցման հիմնական, լրացուցիչ, թե՞ այլընտրանքային եղանակ, և հնարավո՞ր և դրա երկակի կիրառությունը:

Բարոյական վնասի հատուցման ինստիտուտի կենսունակությունը և գործուն լինելը ապահովելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել այն անբարենպաստ հետևանքները (տուգանք, վճռի հարկադիր կատարում, հասարակական պարսավանք և այլն), որոնք վրա կհասնեն դատական ակտը կամովին չկատարելու դեպքում:

Վերջապես քաղաքացիական օրենսգրքում պետք է առանձին հոդված լինի, համաձայն որի. «Ֆիզիկական անձանց պատճառված բարոյական վնասի հատուցման կանոնները տարածվում են իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով դրանք կիրառելի են նշված հարաբերությունների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»: